ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«18» հունիսի 2025թ. № 558

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,04 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՄԻԿՈՆ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԱԴԱՄՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, 0,11918 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Մամիկոն Արտավազդի Ադամյանի կողմից տիրապետվող՝ Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0066-0010 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,15918 հեկտար մակերեսով հողամասի 0,04 հեկտարը Մամիկոն Արտավազդի Ադամյանին կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, իսկ 0,11918 հեկտարը՝ ուղղակի վաճառքի միջոցով, նշված հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 1995 թվականին կառուցված բնակելի տունը, նկուղը, ավտոտնակը և աստիճանահարթակը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Նարինե Ասատրյան» ԱՁ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06011NUNUNME) և Մամիկոն Արտավազդի Ադամյանի (ծնված՝ 14.03.1959 թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Օրենքի ուժով ճանաչել Մամիկոն Արտավազդի Ադամյանի սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0066-0010

կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,04 հեկտար մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 95,22 քառակուսի մետր մակերեսով նկուղի, 93,55 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 10,12 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակի և 48,44 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի նկատմամբ:

2. Մամիկոն Արտավազդի Ադամյանի կողմից տիրապետվող 0,04 հեկտար հողամասից ավել օգտագործվող 0,11918 հեկտար մակերեսով հողամասը կադաստրային արժեքով՝ ընդամենը 1 455 187,8 ՀՀ դրամ (1 քմ 1221 ՀՀ դրամ) ուղղակի վաճառքի միջոցով օտարել Մամիկոն Արտավազդի Ադամյանին:

3. Մամիկոն Արտավազդի Ադամյանի կողմից տիրապետվող 06-006-0066-0010 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,15918 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 95,22 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան նկուղին, 93,5 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը, 10,12 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակին և 48,44 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակին տրամադրել «Սպիտակ համայնք, ք. Սպիտակ, Հ. Թումանյան փողոց, 66 բնակելի տուն» հասցեն:

4. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0066-0010 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,15918 հեկտար հողամասի հատակագիծը:

5. Մամիկոն Արտավազդի Ադամյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հունիսի 18
ք.Սպիտակ